ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/182

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 11.08.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 13.08.2020թ. թիվ 26/26-1/11706-2020 գրությամբ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 31.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2362-2020 գրության հիման վրա, 13.08.2020թ. թիվ 26/26-1/11706-2020 գրությամբ նախաձեռնել է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին:

«ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից www.armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում կցվել է նաև հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2020թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ որոշել է մերժել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3-ով ներկայացվել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով, որում նշված հայտի ապահովման գումարի չափը քիչ է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի առաջին մասի 7-րդ բաժնով սահմանված պահանջներին, միևնույն ժամանակ ըստ նույն մասի 4.4 կետի՝ «Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված /սկանավորված/ տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00՝ ուղեկցող գրությամբ, այնինչ մասնակիցը չի կատարել հրավերով սահմանված վերոգրյալ պահանջը՝ իր կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրիանկը գնահատող հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացրել»:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի

նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7.1 կետի՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 2.5 կետի՝ հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հայտնում ենք, որ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն սահմանված կարգով www.armeps.am համակարգի միջոցով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթում կցել է նաև հայտի ապահովման սկանավորված տարբերակը:

Վերը նշված փաստից երևում է, որ եթե «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն հայտի փաթեթում կցել է հայտի ապահովման սկանավորված տարբերակը, որից ուղղակիորեն հետևում է նաև, որ ՍՊԸ-ն ունի նաև հայտի ապահովման բնօրինակը ու եթե Պատվիրատուն գտնում էր, որ մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը կամ հայտի ապահովման գումարի չափը քիչ է, ապա գնահատող հանձնաժողովը ինչու «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին չի տրամադրել շտկելու հնարավորություն, այլ փոխարենը մերժել է ՍՊԸ-ի հայտը՝ դեռ ավելին, համապատասխան հիմքերը ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապա-տասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:».

Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն, եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից՝ գտնում ենք, որ Կարգի 40-րդ և 41-

րդ կետերը ուղղակիորեն սահմանում են արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում՝ այն էլ որոշ բացառություններով:

Վերը նշված կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ էր, քանի որ չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ 23.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ հայտի ապահովման մեջ արձանագրված անհամապատասխանությունների մասով՝ գնահատող հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր ՍՊԸ-ին՝ վերջինիս առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչը Հանձնաժողովի կողմից չի իրականացվել, այսինքն՝ խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Գտնում ենք, որ վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով նախատեսված դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Հատկանշական է նաև այն փաստը, որ բողոքներ քննող անձի կողմից արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր և բողոքներ, օրինակ՝ թիվ ՍՑ-ԼՕ-2020/96 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«Հանձնաժողովի 28.02.2020թ.–ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հիմք

ընդունելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.10 կետը, Հանձնաժողովը 23.03.2020թ.-ին «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է, քանի որ Մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի համար՝ գնային առաջարկի՝ ընդ որում որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման, ուստի տփալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից «Երէներգո» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջներից, քանի որ Երաշխիքի բնօրինակ տարբերակը Կարգով սահմանված ժամկետում չներկայացնելու պարագայում Հանձնաժողովը պետք է մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը և դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցեր վերջինիս առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 41-րդ կետով նախատեսված դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/182 ընթացակարգի շրջանակներում 26.08.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել

է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 31.07.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/2362-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից):

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին մասի ե. ենթակետի համաձայն՝ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Մասնակցի կողմից հայտով ներկայացվել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով, որում նշված հայտի ապահովման գումարի չափը քիչ է եղել Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից, որը գնահատվել է անհամապատասխան Ընթացակարգի հրավերի առաջին մասի 7-րդ բաժնով սահմանված պահանջներին,

միևնույն ժամանակ մասնակիցը չի կատարել «ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին մասի ե. ենթակետի պահանջը՝ իր կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել է վերջինիս հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.08.2020թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «պայուսակ, ձեռնոց, սրբիչ, վերմակասավան, կոստյում, բրդե կտոր» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3-ով ներկայացվել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով, որում նշված հայտի ապահովման գումարի չափը քիչ է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի առաջին մասի 7-րդ բաժնով սահմանված պահանջներին, միևնույն ժամանակ ըստ նույն մասի 4.4 կետի՝ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում

ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, այնինչ մասնակիցը չի կատարել հրավերով սահմանված վերոգրյալ պահանջը՝ իր կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացրել:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետը, 28.07.2020թ. որոշում է կայացրել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 13.08.2020թ. թիվ 26/26-1/11706-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության՝ 31.07.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2362-2020 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից 17.08.2020թ. ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:***

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:*** Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի

հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: ***Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին,*** և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը,

ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: ***Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:***

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9 և 8.10 ենթակետերի համաձայն՝

8.9. ***Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

(...)

8.10. ***Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:***

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «պայուսակ, ձեռնոց, սրբիչ, վերմակասավան, կոստյում, բրդե կտոր» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 23.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 3-ով ներկայացվել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով, որում նշված հայտի ապահովման գումարի չափը քիչ է «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 5 տոկոսից, որը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերի առաջին մասի 7-րդ բաժնով սահմանված պահանջներին, միևնույն ժամանակ ըստ նույն մասի 4.4 կետի՝ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ, այնինչ մասնակիցը չի կատարել հրավերով սահմանված վերոգրյալ պահանջը՝ իր կողմից հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացրել:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 42-րդ կետը, 28.07.2020թ. որոշում է կայացրել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Կարգի 41-րդ կետը և Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9 ենթակետը հստակ սահմանում են, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, մինչդեռ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.07.2020թ. նիստի ժամանակ Ընկերության հայտում արձանագրելով անհամապատասխանություն Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջի մասով, այն է՝ հայտի ապահովումը ներկայացվել է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսից պակաս, Ընկերությանը չի ընձեռել անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, այնուհետև արձանագրել է, որ

Ընկերությունը գնահատող հանձնաժողովին մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն չի ներկայացրել բանկային երաշխիքի բնօրինակը՝ ուղեկցող գրությամբ և մերժել է վերջինիս հայտը, **միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրն է համարվում 24.07.2020թ., իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.07.2020թ. նիստի ժամանակ արդեն իսկ արձանագրել է և պարզ է դարձել առնվազն գնահատող հանձնաժողովի համար, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից Armeps էլեկտրոնային գնումների համակարգ ներբեռնված երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակն Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան է:**

Փաստորեն, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, այն հիմքով, որ **վերջինս մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն չի ներկայացրել Հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանված պահանջին չհամապատասխանող այն բանկային երաշխիքի բնօրինակը, որը պարտադիր պետք է շտկման ներկայացվեր Ընկերությանը:**

Արդյունքում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են Կարգի 41-րդ կետով և Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9 ենթակետով սահմանված պահանջները, ուստի՝ նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/11706-2020 գրությամբ «ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**